



Student/Registration Number Centre Number

2005 PUBLIC EXAMINATION

Armenian Continuers Level

Wednesday 19 October: 2 pm Eastern Standard Time

Reading Time: 10 minutes

Working Time: 2 hours and 50 minutes

- You have 10 minutes to read all the papers and to familiarise yourself with the requirements of the questions. You MUST NOT write during this time.
- Monolingual and/or bilingual printed dictionaries may be consulted during the reading time and also during the examination.

Section 1: Listening and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 50 minutes for Section 1.
2. Write all your answers to the questions in Section 1 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
6. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

Part A

20 marks

Attempt Questions 1–3

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of texts by identifying and analysing information and convey the information accurately and appropriately*

You will hear THREE texts. Each text will be played twice. There will be a short break between the first and second playings in which you may make notes.

Listen carefully to each text and then answer the questions in ENGLISH.

Text 1	Marks	You may make notes in this space.
1. (a) Why are Ani and her friend having this conversation?	2	<hr/> <hr/> <hr/> <hr/> <hr/>
(b) Describe Ani's approach to this particular situation.	4	<hr/>

Text 2

2. How is language used in this advertisement to attract potential travellers to Tahiti?

Marks**6**

You may
make notes in
this space.

Text 3

3. (a) How can the saying ‘necessity is the mother of invention’ be applied to Emma’s decision to write children’s stories?

- (b) What aspects of Emma’s personality are revealed in this interview?

Marks**3**

You may make notes in this space.

5

Part B

10 marks

Attempt Questions 4–5

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- understand general and specific aspects of texts by identifying and analysing information
- convey the information accurately and appropriately

You will hear TWO texts, one relating to Question 4 and one relating to Question 5. Each text will be played twice. There will be a short break between the first and second playings in which you may make notes.

Listen carefully to each text and then answer the questions in ARMENIAN.

Text 4	Marks	You may make notes in this space.
4. Identify the points raised in the mother's argument to try to persuade Alex to change his mind.	4	<p>Մօր կողմէ արծարծուած, ո՞ր կէտերը կը փորձեն համոզել Ալքսին՝ փոխել իր որոշումը:</p> <hr/>

Text 5

5. How effective is the speaker's tone and use of language in conveying his message?

Ինչպիսի՞ն է բանախօսի թոնի և լեզուի ազդեցութեան ոյժը,
վոխանցելու իր պատղամը:

Marks**6**

You may
make notes in
this space.

End of Section 1

BLANK PAGE

BLANK PAGE



Student/Registration Number Centre Number

2005 PUBLIC EXAMINATION

Armenian Continuers Level

Section 2: Reading and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 1 hour and 15 minutes for Section 2.
2. Write all your answers to the questions in Section 2 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet and on page 9.
6. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

Part A

20 marks

Attempt Questions 6–7

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- understand general and/or specific aspects of texts, by, for example, comparing, contrasting, summarising, or evaluating, and convey the information accurately and appropriately

6. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ

ՄԻ ԹԱՏԵՐԱԿ՝ ՎԻԼԻԱՄ ՍԱՐՈՅԵԱՆԻց

*Հիւանդանոցի սպասասենեակը։ Մի մարդ
դուկը ավերի մէջ բռնած։ Տարիքաւոր
բժիշկը մտնում է ներս։*

բժիշկ Տղայ է։

մարդ Ներողութիւն։

բժիշկ Տղայ է, Տղա'յ։

մարդ Պարոն բժիշկ, գիտեմ որ դժուար կացութիւն է, բայց խնդրեմ ասացէ՞ք, ինչպէ՞ս է հայրա։

բժիշկ Զեր հայրը։

մարդ Այո։ Եկել եմ նրա որպիսութիւնն իմանալու։ Գիտեմ որ երկար կեանք չունի եւ հէնց դրա համար էլ ուզում եմ անպայման նրա հետ վերջին մի երկու խօսք փոխանակել։

բժիշկ Նստեցէ՞ք խնդրեմ։

մարդ Մահացե՞լ է։ Դա էք ուզում ասե՞լ։

բժիշկ Գիտէք, բժշկութիւնն այլեւս խուսափում է չուտափոյթ եղբակացութիւններից։

մարդ Ուրեմն չի մահացել, այո՞։

բժիշկ Ես այդպէս բան չասացի։

մարդ Որեմն ... մահացել է ...

բժիշկ Այդ էլ չասացի։

Question 6 continues on page 3

Question 6 (continued)

- մարդ Այո՛, չսսացիք: Բայց ես աշխատում եմ ձեզ օգնել, որ ինձ մի պարզ ու յստակ պատասխան տաք:
- բժիշկ Նա ծանր հիւանդ է:
- մարդ Մեռել է՞:
- բժիշկ Խոր քոմայի մէջ է:
- մարդ Ե՞րբ կարծում, որ քոմայից դուրս կը գայ: Եթէ այլեւս ոչինչ չեմ կարող անել, կուզէի մի անգամ եւս նրան ողջ տեսնել ու գոնէ մի ցտեսութիւն ասել:
- բժիշկ Կարող է որ նա քոմայից դուրս չգայ:
- մարդ Կարո՞ղ է հակառակը պատահել:
- բժիշկ Վստահ չենք կարող լինել:
- մարդ Պարզ է: Ամէն դէպում, ես կուզէի ներս գնալ եւ սպասել:
- բժիշկ Զեմ կարծում որ այդպիսով լաւ բան արած կը լինէք:
- մարդ Ինչո՞ւ:
- բժիշկ Վստահ չեմ, որ նրա նկատմամբ դա ճշշտ կը լինի:
- մարդ Ինչպէ՞ս թէ:
- բժիշկ Դեռ քոմաները լաւ չենք հասկանում: Եթէ յանկարծ պատահի որ նա քոմայից դուրս գայ եւ դա նրան դուր չգայ, կարող է անմիջապէս նորից քոմայի մէջ մտնել: Ուրեմն պէտք է լաւ մտածել:
- մարդ Իսկ ի՞նչն է ձեզ կարծել տալիս, որ իմ հօրը դուր չի գայ գտնել մի տեղում, ուր նրա կողքին նստած կը լինեմ ե՞ս:
- բժիշկ Վստահ լինել իհարկէ չեմ կարող, բայց նա ձեր մասին երբեւէ չի հարցըրել:
- մարդ Ուրիշ մէկի մասին հարցըրե՞լ է:
- բժիշկ Քոմայի մէջ մանելուց առաջ նա զառանցանքի մէջ անվերջ կրկնում էր մանչուկ, մանչուկ:
- մարդ Երբ փոքր էի, նա յաճախ ինձ այդպէս էր կանչում: Խնդրեմ, ինձ նրա մօտ տարե՛ք:
- բժիշկ Եթէ պնդում էք, կը տանեմ, բայց իմացէք, որ ես հետեւանքների համար որեւէ պատասխանատութիւն յանձն չեմ առնում:
- մարդ Պարզ է:

Գնում են

Question 6 continues on page 4

Marks

Question 6 (continued)

- (a) How is the doctor's attitude towards medical care reflected in the play? **3**

- (b) How are the comic effects achieved in the play? **6**

End of Question 6

BLANK PAGE

7. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

Ալբերտ Ալին

Երեկ ստացայ նամակդ: Երբեք չէի կարող երեւակայել, որ դժւարութիւններ ունես ծնողներիդ հետ: Ծնողներդ հանապի անձեր կերեւան ինձ: Ես կարծում էի, որ միայն իմ ծնողները ինձ չեն հասկանում: Ճիշտն ասած, անզամներ մտածել եմ զրել քեզ այս խնդիրների մասին, բայց անյարմար էի զգում:

Վերջերա, նրանք մեծ իրարանցում բարձրացրին, երբ ես առաջին անգամ մաղերա գունաւորեցի: Մայրս սարսափահար ասաց, որ ես իրաւոնք չունեմ անից դուրս գալ, մինչեւ այդ ահաւոր կարմիր գոյնը չանցնի մազերից: Բայց չէ որ զա ինձ դուր է գալիս, ես դրանով աւելի ինքնատիպ եմ դառնում, ինչպէս թերթերի մէջ տպուած նկարները: Հայրս էլ անընդհատ ասում է, որ այդքան երաժշտութիւն լսելու փոխարէն, եթէ երբեմն էլ զիրք կարդամ, հաւանարար, ուղեղս չի ժանգուուի: Բայց ինչ զիրք կարդալ: Բացում ենք համակարգիչը եւ կարդում ինչի մասին ուզում ենք, խօսում ում հետ ուզում ենք: Հիմա ո՞վ է զիրք կարդում, նախկինում համակարգիչ չկար, դրա համար էլ մարդիկ զիրք էին կարդում:

Գիտես Ալին, ես կարծում եմ ծնողներս շատ պահպանողական են եւ օրուայ փոխութիւնների հետ չեն քայլում: Զես հաւասայ, որ նրանք կարծում են «Մեթալիքա»ն ինքնաշարժի մի տեսակ է: Յաճախ նրանց դուր չի գալիս իմ այս կամ այն ընկերը: Եւ դուր չի գալիս այն պատճառով, որ ընկերս մի քանի օղակ ունի ականջին կամ քթին, կամ էլ պարզապէս դժուար է ասել, թէ այդ ընկերս աղջիկ է թէ տղայ: Արդե՞օք կարեւոր է սա:

Ծնողներս զիտեն, որ ես իրենց շատ եմ սիրում, բայց ինչ կարող եմ անել երբ վարմունքս վշտացնում է նրանց: Նրանք ուզում են, որ մենք իրենց չիրականացւած երազները իրականացնենք: Բայց ինչո՞ւ չեն ուզում հասկանալ, որ մենք էլ մեր երազանքները ունենք:

Այսպիսով վերջացնում եմ նամակս, երբ հանդիպենք մանրամասօրէն այս առթիւ կը խօսենք:

Ալբերտ
Մերի

Question 7 continues on page 7

Marks

Question 7 (continued)

- (a) Why is Mary now writing to Allen?

3

- (b) Outline the issues Mary has with her parents.

3

- (c) How justified are the attitudes and opinions Mary expresses in her letter?

5

End of Question 7

Part B

10 marks

Attempt Question 8

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- understand general and specific aspects of a text by identifying, analysing, and responding to information
- convey information coherently (structure, sequence, accuracy and variety of vocabulary and sentence structure) and appropriately (relevance, use of conventions of the text type)

8. Read the text and then answer in 150–200 words in ARMENIAN the question that follows.

Յարգելի Խմբագիր

Անցեալ շաբաթ կարդացի յուր մը ձեր թերթին մէջ, հետեւեալ վերնագրով - «Պիոսակ» (brand) հաղուստնեղին - պատաճի մը Ենթարկուեցաւ յարձակման եւ ծեծի՝ կողոպտուերով իր “Նայքի” կօշիկներէն»: Այնպէս սոսկացի կարդալէս ետք, որ որոշեցի ուղղել այս նամակը ձեզ:

Ժողովուրդի առօրեայ կեանքը, որորուած է զանազան ծանուցումներով: Հասարակութեան բոլոր խառները Ենթարկայ կը դառնան անոնց յարձակման, առանց տարիքի խորականութեան:

Առեւտրական կազմակերպութիւնները ոչինչ կը խնայեն մեզ ամէն վայրկեան յիշեցնել իրենց արտադրութեան մասին: Երբեմն այնքան կ'ազդէ ծանուցումը մեր վրայ, որ շատ արագ կը վազենք գնելու այդ իրը: Յաճախ կը հիսամթափուինք երբ չհամապատասխաներ մեր սպասելիքներուն: Երբեմն ալ այնքան հաճելի կը թուի մեզի, մեր ձեռք բերած նոր իրը, որ մեր բարեկամներուն եւ ծանօթներուն խորհուրդ կուտանք, որ շտապեն ձեռք բերել զայն:

Տօնական օրերուն աւելի կը բազմապատկուի այդ ծանուցումներուն թիւը: Ծննդեան օրերուն ծանուցուղ առարկաները չափէն աւելի ամէն տեղ են, ինչպէս մեր նամակասուվերուն մէջ, հեռատեսիլի վրայ, խանութներու ցուցափեղկերու վրայ, ձայնասփիւռի կայաններէն եւայլն...

Այս բորոք կը հրապուրեն նաեւ երեխանները եւ պատանինները, որոնք որեւէ եկամուտ չունին: Անոնք կ'երազեն ունենալ այս կամ այդ ծանուցուղ իրը, որը յաճախ գեղեցիկ հագուստ մըն է: Այդ ընտրուած հագուստը ունի պիտակ, որը հանրածանօթ է:

Այս պատանինները իրենց ընկերներուն նմանելու համար անսպայման կը պնդեն ունենալ այդ պիտակը կրող հագուստը: Ան յաճախ չկրնար հասկնալ նոյնակ, թէ իր ծնողքը նվաթապէս չկրնար բաւարարել իր այդ պահանջքը: Ան ամէն միջոցի կը զիմէ համոզելու իր ծնողքը: Կը խնդրէ, կը պահանջէ եւ աւելին կը նեղանայ եթէ չունենայ: Ի վերջոյ ծնողքը տեղի կուտայ եւ երեխայի փափաքը կը գոհացնէ: Սակայն, խնդիրն այն է, որ շատ չանցած, նոր պիտակ մը կը ներկայացնի շուկային մէջ:

Ո՞վ է այսուեղ մեղաւորը : Երեխաս՞ն, ծնո՞ղքը, ծանուցումները թէ մեր հասարակութիւնը: Ի՞նչպէս պատահած է, որ մենք գերի դարձած ենք պիտակներուն:

Արամ Մինասեան, Էփինկ

In response to the above, write an article for the same newspaper, expressing your thoughts as a teenager on brand clothing.

Որպէս պատանի, զրէ՛ յօդուած մը նոյն թերթին համար, արտայայտելով քու մօտեցումդ պիտակ հագուստներու վերաբերեալ:

You may make notes in this space.

Do not remove this page from the question booklet.

Student/Registration
Number

--	--	--	--	--	--	--	--	--	--

Armenian
Continuers Level

Centre Number

--	--	--	--	--	--

Question 8

End of Section 2

BLANK PAGE

BLANK PAGE



Student/Registration Number Centre Number

2005 PUBLIC EXAMINATION

Armenian Continuers Level

Section 3: Writing in Armenian (15 marks)

Instructions to Students

1. Allow approximately 45 minutes for Section 3.
2. Write your answer to a question from Section 3 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ONE question in ARMENIAN.
4. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
5. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

Total marks – 15

Attempt ONE question from Questions 9–11

When judging performance in this section, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates:

- relevance and depth of treatment of ideas, information, or opinions
 - accuracy and range of vocabulary and sentence structures
 - the capacity to structure and sequence response and capacity to use conventions of the text type
-

Answer ONE question from this section in 200–250 words in ARMENIAN.

- 9.** You have come home after the last day of your Year 12 exams. You feel that for a range of reasons, you are facing an uncertain future. Write a diary entry in which you reflect on your future.

12-րդ դասարանիդ վերջին քննութիւնը յանձնել ես և տուն վերադարձել: Որոշ պատճառներով զգում ես, որ անորոշ ապագայի դիմաց ես կանգնած: Գրի՞ր օրագիրով, անդրադառնալով ապագայիդ մասին:

- 10.** The student council at your school asked you to organise the annual fundraiser. Everything went wrong. Write a report for the student council in which you evaluate the fundraiser and suggest what should happen in 2006.

Դպրոցիդ աշակերտական խորհուրդը, յանձնաբարեր էր քեզ կազմակերպել դպրոցի տարեկան հիմնադրամի ժողովումը, որն անյաջող արդիւնք ունեցաւ: Գրի՞ր տեղեկագիր մը աշակերտական խորհրդի համար, ներկայացնելով անյաջողութեան պատճառները եւ տուր սուսչարկներդ 2006-ի համար:

- 11.** Your Armenian grandfather is turning 80. For his birthday, write a story that you know he will treasure.

Քո հայ մեծպապը շոտով լինելու է 80 տարեկան: Իր տարեկարձի առթիւ, զրի՞ր մի պատմութիւն, որ գիտես նա կարմէքաւորէ:

You may make notes in this space.

Question Number:

End of Section 3

BLANK PAGE

BLANK PAGE

BLANK PAGE



2005 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 1: Listening and Responding

Transcript

Section 1, Part A

Text 1

- Արա Ալօ , Անի ինչպէ՞ս ես, ինչպէ՞ս անցուցիր քննութիւններդ: Ես արդէն վերջացուցեր եմ, կ'ուզեմ շունչ մը առնել եւ տեղ մը երթալ, իսկ դու՞ն...
- Անի Ես տակառին ունիմ մէկ քննութիւն եւ մինչեւ զայն չվերջացնեմ, չեմ փափաքիր որեւէ դադար առնել: Եւ յետոյ ծնողքս ալ չ'արտօներ, որ երթամ:
- Արա Անի ... մի՛ մերժեր, փոքրիկ դադար մը երբեք պիտի չխանգարէ քեզ, ընդհակառակը պիտի օգնէ...
- Անի Օ՛ մի՛ պնդեր խնդրեմ:
- Արա Գիտե՞ս, ներկայիս հետաքրքրական շարժապատկեր մը կը ցուցադրուի: Մեր բոլոր ընկերները զացած են բացի մեզմէ, եւ պիտի շարունակուի մի՛ միայն յառաջիկայ շաբաթ: Եթէ չաճապարենք, մեծ բան պիտի կորսնցնենք: Խած եմ թէ շատ զուարձալի շարժապատկեր մըն է:
- Անի Գիտե՞ս, արդէն սկսայ մտածել ընկերակցիլ քեզ:
- Արա Ուրեմն պատրա՞ստ ես:
- Անի Այս , կարծեմ դադար մը ունենալը լաւ պիտի ըլլայ:
- Արա Ինչ լաւ, շուտով տումսերը ապահովեմ:

Text 2

«Դրախտավայր» ձամբորդական ընկերութիւնը ձեղ հրաւիրում է այցելելու թահիթի՝ հինգ զգայարանների կզզին: Վեց օր լինելով այս հրաշագեղ կզզում, ուր բնութիւնը պահպանել է իր անազարտ գեղեցկութիւնը, դուք անմոռաց օրեր կանցկացնէք աշխարհի ամենագեղեցիկ ծովափին: Այստեղ, դուք կը զմայլէք մի այնպիսի կանաչ բուսական աշխարհով, որի նմանը չէք կարող երեւակայել: Ծովափի կապուտակ ջուրը, սպիտակ աւազը, ջրի զգացումը ձեր մարմնի վրայ, երբ լողում էք հրաշագեղ ձկներով շրջապատռած, եւ մանր աւազը: Իսկ եթէ սրան աւելացնենք տեղաբնակների ձեռքով պատրաստուած թարմ ձկնացին կերակուրները, ուրեմն ձեր հաճոյքը անսահման կը լինի: Զուարձացըէք ձեր զգայարանները: Այցելէ՛ք թահիթի:

Text 3

Սիրելի ունկնդիրներ, այսօրուայ ռազիոժամի գրական բաժնի հիւրն է, հանրածանօթ հեղինակ՝ Տիկ Էմմա Արմենեանը, որուն գրուածքները հետաքրքրութեամբ կը վնասուուի եւ կ'ընթերցուի պատանիներու կողմէ:

Հ Բարի գալուստ Էմմա: Ի՞նչը քեզ մղեց զրելու պատմութիւններ միայն պատանիներու համար:

Պ Ես միշտ հետաքրքրուած եմ պատանիներու ներաշխարհով: Ըլլալով մայր եւ ուսուցիչ, կը նկատէի, որ պատանիները կը խուսափէին ընթերցել եւ կը մտածէի միջոց մը գտնել, ընթերցանութեան սէր ստեղծելու իրենց մէջ: Ուրեմն, ալէտք է մտածէի տասներեք տասնչորս տարեկանի նման եւ այնպիսի պատմութիւններ ստեղծէի, որ թէ՛ հետաքրքրաշարժ ըլլային եւ թէ՛ արտացոլէին վերոյիշեալ տարեկամբի մտածելակերպը եւ դիրքը:

Հ Գրւածքներուդ գաղափարները ինչպէ՞ս կ'առաջանան մտքիդ մէջ:

Պ Իմ գաղափարները մէծ մասամբ կապուած են մանկութեանս եւ պատանեկութեանս քաղցր օրերուն: Յենուած այդ յիշողութիւններու վրայ, աչքի առաջ ունենալով ներկայ կեանքի պահանջները եւ երեխաններու մտածելակերպը, կը զարգացնեմ մտքերս եւ զրի կ'առնեմ: Իմ պատմութիւններով ես կ'արտայայտեմ, անձնական փորձառութիւններես ձեռք բերած արժանիքները:

Հ Ինչքա՞ն ժամանակ կը տրամադրես ամէն մէկ զրքի վրայ:

Պ Հինգին վեց ամիս:

Հ Երբեք կը մտածես զրել նաեւ չափահասներու համար:

Պ Այս հարցը անգամներ ինձ տրուեր է եւ պատասխանն այն է, որ նոյնիակ չափահասները համարդով կը կարդան իմ մանկապատանեկան պատմութիւնները: Երեւի ամէն չափահասի մէջ դեռեւս կ'ապրի պատանի միտքը:

Հ Ապագային ի՞նչ ծրագրեր ունիս:

Պ Իմ երկու զրքերու հիման վրայ շարժապատկեր պիտի պատրաստուի, ինչ որ հիմնալի բան է: Ուրեմն, առ այժմ կենտրոնացումս այս խնդրի վրայ է, քանի որ այս ծրագրի յաջողութիւնը, ճամբան կը բանայ յաւելեալ շարժապատկերներու առաջարկներու, իսկ եթէ ոչ, պիտի վերազառնամ նոր զրքեր զրելու:

Սիրելի Էմմա, կը մաղթեմ քեզ նորանոր յաջողութիւններ եւ նուածումներ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ քո տրամադրած ժամանակի համար:

Section 1, Part B

Text 4

- Ալէքս Մայրիկ, ես երկար մտածելուց յետոյ, որոշեցի այս մէկ տարին յետաձգել ուսումս եւ ձամբորդել արտասահման:
- Մայր Ի՞՞նչ ես ասում տղաս: Դա սիսալ որոշում է: Մի ամբողջ տարի կորցնել, աննպատակ ձամբորդութեան վրայի: Ալէքս, զու պէտք է համալսարան գնաս, ապագայիդ մասին մտածես: Որոշմանդ մասին խօսե՞լ ես հօրդ հետ:
- Ալէքս Ոչ մայրիկ, նախ որոշեցի քեզ հետ խօսել: Ձամբորդելը աննպատակ չէ, փորձառութիւն ձեռք կը բերեմ:
- Մայր Ալէքս, այդ ամէնը ճիշտ է, բայց ես կարծում եմ, որ այժմ, երբ զու նոր ես աւարտել դպրոցը, սովորածդ դեռ թարմ է մտքումդ, պէտք է շարունակես ուսումդ: Ձամբորդել զու դեռ կը հասցնես:
- Ալէքս Բայց յետոյ ուշ կը լինի:
- Մայր Ոչ ուշ չի լինի: Ամբողջ կեանքդ դեռ առջեւում է: Բնարի՛ր մասնագիտութիւնդ, զնա՛ համալսարան, սովորի՛ր: Յետոյ, կարող ես նաեւ ձամբորդել:
- Ալէքս Մայրիկ, մի փորձիր փոխել իմ միտքը, այլ աշխատիր ինձ հառկանալ, քանի որ երկար եմ մտածել այդ մասին:

Text 5

Աիրելի՛ երիտասարդներ,

Այսօր կ'ուզեմ խօսիլ «Կամաւոր աշխատանքի՝ անոր կարեւորութեան եւ իր զրական ազգեցութեան»ը մասին:

Կամաւոր աշխատանքը մարդասիրական հիմունքների վրայ ստեղծուած գործունէութիւն մըն է, որ կը հաւատասմ, բոլորս համաձայն ենք: Վստահ եմ, բոլորդ ալ օտարներուն օգնելու հոգեկան բաւարարութեան փորձառութիւնը ունեցած էք: Այդ աշխատանքի արդիւնքը յաճախ չենք տեսներ անմիջապէս, սակայն վստահ եղիք, որ այդ երբեք անտեղի պիտի չ'ըլլայ եւ չափազանց անհետեշտ է:

Այս ամառ մեր նահանգի մէջ սկսուած հրդեհները մարելու մէջ, որքա՞ն մեծ բաժին բերին մեր կամաւորները: Թերեւս, ձեզմէ ոմանք ալ անոնց մէջ մաս կազմեցին: Կամաւորներու մեծ խումբ մը եւս, օգնեց նոր ծառեր տնկելու աշխատանքին: Գալիք սերունդները պիտի տեսնեն այս ծառերը: Անշուշտ, որ անոնք երախտագիտութեամբ պիտի յիշեն ձեզ: Այդ պիտի ըլլայ ձեր ամենամեծ վարձատրութիւնը:

Պէտք չէ, որ մեր ձեռքերը ծալած սպասենք, որ ուրիշները միայն կատարեն այդ կամաւորական աշխատանքը: Դուք ալ միացէք իրենց: Անոնց տեսակները շատ են: Ես վստահ եմ, որ այդ աշխատանքներին որեւէ մէկը համապատասխան պիտի ըլլայ ձեզի համար:

Գիտեմ, որ բոլորս ալ շատ զբաղուած կեանք ունինք, եւ կ'աշխատինք մեր լարուած կեանքին մէջ հաւասարակռութիւն պահել գործի, ընտանիքի եւ ուսումնական աշխատանքներու մէջ, բայց հաւատացած եմ, որ մենք այս լարուած կեանքին մէկ մասը կ'ընանք նուիրել մեր համայնքին, կամաւոր աշխատանքի միջոցաւ:

Շնորհակալութիւն